ՓՈՒՅԼ

Թիւ 1155 | ՇԱԲԱԹ | 1877 ՓԵՏՐՎԱՐ 26

ԱԶԳԱՅԻՆ

Որոշեց երէկ ազգային երեսփոխանական ժողովը՝ չընդունիլ Ս. Պատրիարքը Հօր հրաժարականը, ըստ տեղեկագրոյ ատենապետաց դիւանի, և յայտարարել նորին բարձր Սրբազնութեան թէ, ժողովն չընդունելով իւր հրաժարականը՝ ազգին համար չէ թէ վնասակար այլ օգտակար որոշում մ՚ըրած կըլլայ։

Այս միայն եղաւ երէկ ընդհ. ժողովոյ տեսած գործը։ Այսուհետև ժողովոյն մէջ տիրեց կիրքն, դոռում գոչումն, շփոթութիւնն ու խառնակութիւնը, և եթէ ներելի է ճշմարիտն ըսել՝ երկու կողմն ալ, աջակողմ ու ձախակողմ, կամ ինչպէս զիրար կը կոչեն վերջին ժամանակներս՝ յեռադիմական ու յառաջադիմական–անկարգութեանց տեղի տուին, և ատենապետ փաշայի բարեկարգութեան յորդորներն ու հրաւէրներն բաղմիցս անլսելի մնացին։ Այս ամենուն պատճառ՝ երեսփոխաններէն խօճասարեան Օգսէն էֆէնտիի արտասանած էրէպիլլ-ին բառն եղած է. մէկ կողմը՝ Աջակողմ՝ յանչափս կնկրտէր՝ դատապարտել ղանի յանդիմանութեան քուէով. միւս կողմը՝ Ձախակողմ՝ կվանար բոլորովին անպարտ հրատարակել. նոյն ինքն Օգսէն էֆէնտի կարդաց դիր մը, որ կէս ժամու չափ տևեց. ամեն հնար ու ճարտարութիւն թափած էր ինքզինքն արդարացունելու, և զիրաշ ժողովը դատապարտութեան արժանի ցուցնելու համար. բայց վերջապէս դարձուածով իմն յեռս կկոչէր արտասանած բառը։ Այս մասին շատ մը խօսքեր, բացագանչութիւններ, և երկու կողմանէ մէկ մէկու դէմ յարձակումներէ յետոյ՝ քուէի դիրուեցաւ. աջակողմն ոտք ելան՝ Օգսէն էֆէնտիի համար յանդիմանութեան քուէ տուին. ձախակողմն բողոքեց, շարունակ բողոքեց, հակառակ քուէ չը տուաւ. Օգսէն էֆէնտի ալ՝ որ պահ մը դուրս ելած էր՝ դարձաւ, նա ալ մերթ բողոքեց, մերթ վերաքննութիւն պահանջեց, և նախագահին՝ որ Նարպէյեան Տ. Խորէն սրբազանն էր՝ թոյլ չտրուեցաւ որ ըստ յայտարարութեան Դիւանին՝ ժողովին արտասանած յանդիմանութեան վճիռն դործադրէ, այն է՝ հրապարակաւ հաղորդէ Օգսէն էֆէնտիի։

Ատեանը՝ այսպիսի շփոթութեան մէջ փակուեցաւ, և այդ յանդիմանութեան վճռոյ դործադրութեան խնդիրն բուռն բողոքներու ներքև մնաց առկախ։

* * *

Բայց չմոռնանք նշանակել, թէ այդ վճիռը մէկ կողմէն արտասանուելէն յետոյ, երբ դուրս ելած էր Օգսէն էֆէնտի, առ ազգային վարչութիւնն ուղղեալ հարցմանց չորս դրեր կարդացուեցան, որոց երեքը՝ փափաղեան Ստեփան էֆէնտիի, և մէկը՝ Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնտիի կողմանէ էր։ Փափաղեան էֆէնտի նշանակելով թէ Քաղաքական ժողովն Ազգային ժողովոյ որոշման հակառակ վարուած է՝ ընդհանուր տրոց հաւաքման մասին ինչ ինչ կէտերու մէջ, բացատրութիւն կպահանջէր։ Փափաղեան էֆէնտի՝ ծանօթութիւն կխնդրէր Քաղաքական ժողովէն՝ Շահնազարեանի վարժարանի, ազգային կամմասնաւոր ըլլալուն վրայ և Շահնազարեանի կասկը ժողովին ներկայացունել կառաջարկէր։ Դարձեալ Փափաղեան էֆէնտի կխնդրէր, որ Պէյօղլուի մեծ հրդեհին պատճառաւ եղած հանդանակութեան հաշիւը ժողովին բերուի։ Իսկ Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնտի բացատրութիւն կպահանջէր՝ ամենայն Հայոց վեհափառ Հայրապետին ուղղակի թեմն եղող նոյն իսկ մայրաքաղաքիս մէջ, Աղթամարայ Ս. կաթողիկոսին կողմանէ մէկ երկու քահանայից խաչ կախելու արտօնութեան կոնդակ ղրկուած ըլլալուն համար։

Աւասիկ այս չորս դրերը ազգային վարչութեան յղել որոշուեցաւ ընդհանուր հաւանութեամբ, պատասխանն առաջիկայ նստին լսելու պայմանաւ։

* * *

Խնդիր մ՚ալ երէկ բաւական վէճի և յուզման տեղի տուաւ։ Առաջարկող եղաւ, որ Օգսէն էֆէնտիի կարդացած դիրը՝ որ զինքն արդարացունելու համար շարադրած էր, բայց միանդամայն ըստ Քաղաքական ժողովն կամքաստանէր իբրև շռայլիչ կեդրոնական մնտուկին և իբրև կապտիչ ժողովրդական իրաւանց (ատենագրութեանց հրատարակութեան յապաղման պատճառաւ), – Քաղաքական ժողովոյ դէմ իբրև պարզ ամբաստանագիր նկատուի այդ դիրը, և ըստ ներքին կանոնաց ի նախաքննութիւն յղուի առ դիւանն ատենապետաց։ Այս առաջարկութեան դէմ ելան կողմէն բողոք ու աղաղակ բարձին, ձախ կողմէն պնդեցին, և մինչև իսկ ըսողներ եղան թէ իրենք ալ նոյն դիրը կստորագրեն իբրև ամբաստանագիր. սակայն երկու կողմանց խօսքերն ալ աղաղակաց մէջ խեղդուեցան և որոշում չտրուեցաւ այս մասին։

* * *

Մեք կցաւիմք այսպիսի անհաճոյ անցից ու դարձուածոց վրայ. անշուշտ մեզի հետ կցաւին նաև ամեն ողջախոհ ազգայինք։ Մեք կփափաքիմք, որ՝ ինչպէս վայել է՝ ազգային ժողովը հանդարտութեան, սիրոյ ու միաբանութեան օրինակ տայ ընդհանուր ազգին, խսպառ խորշելով մնոտի ու անկարևոր խնդիրներէ ու վէճերէ, որոնք բնաւ օգուտ չունին ազգին։

Մեք կցանկամք, որ ազգիններկայացուցիչն եղող այս դերագոյն ժողովէն ազգին ընդհանրութեան օգտակար որոշումներ դուրս դան. մեր ազգը մանաւանդ այժմ առաւել բաղմակարօտ է. վարժարան՝ որբանոց՝ արհեստարան և ուրիշ այսպիսի կարևորագոյն հաստատութիւններ ազգին մէջ կառուցանելու հնարքն ու միջոցները խորհիլ և գործադրել տալ պարտի ազգային ժողովն. երկարժամանակեայ պանդխտութեան, աղքատութեան, և ուրիշ այսպիսի սպառիչ ու կորստական թշուառութեանց առաջքն առնուլ պարտի ազգային ժողովն։ Ցա՛նժամ կատարած կըլլայ իւր պարտաւորութիւնն առ ազգն. յայնժամ Ազգին ճշմարիտ ու հաւատարիմ ներկայացուցիչն ըլլալու փառքը կունենայ, և իւրաքանչիւր հայու սրտեռանդն շնորհակալեաց արժանի կհանդիսանայ։

Էրէպիլլ-ին բառի մը համար այսչափ իրարանցում՝ չա՛րժէր։ Մեր կանոնագրութիւնը չներէր՝ այս մասին բառ մ՚իսկ արտասանել, այլ կտրամադրէ՝ միայն ձեռք վերցունելով դժգոհութիւն յայտնել։

—

Գումգափուի Մայր եկեղեցւոյ, Գումգափուի դրսի, Կէտիկփաշայի, Եէնի գափուի, Սամաթիոյ, Նարլը-գափուի, և Թօփգափուի և այլ թաղական խորհրդոց կողմանէ երէկ դիր մը տրուեր է Քաղաքական ժողովոյ, որով կայտարարեն թէ ժողովուրդը կփափաքի որ Գումգափուի պատրիարքարանը մնայ դարձեալ ազգային պաշտօնատուն, և տեղական փոփոխութիւն չըլլայ։

Կանխաւ մեք այս կարծիքն յայտնած եմք. Ս. Պատրիարք Հայրն ալ միևնոյն դիտողութիւնն ըրած է։ Կյուսամք, թէ ուշադրութեան կառնուի, և հարկ չմնար՝ այս մասին դարձեալ դարձեալ գրելու և խօսելու։

—

Ամսոյս 5-ին, Վարդանանց տօնի օրը, Երզնկայի Ս. Նշան եկեղեցւոյ մէջ, ի պատիւ յիշատակի Վարդանանց՝ հանդէս կատարեր են. բայց դպրոցական սովորական հանդէսներէ խիստ տարբեր կերպով։ Նոյն օրը, մէկ քանի տղայոց թատերական զգեստ հագցունելէն զատ՝ տղու մ՚ալ շրջազգեստ (ֆիսթան) հագցուցեր, և դիրկն ալ երկու տարեկան տղայ մը տալով՝ իբրև Վարդանայ կինը ձևացուցեր են։ Այս թատերախաղը սեղանին վրայ ներկայացուցեր են, սեղանին վարագոյրն ալ բաց։

Երզնկայէն փետր. 10 թուով նամակ մը

ՓՈՒՆՋ

սոյն տեղեկութիւնը գրելէն յետոյ, կ յաւելու թէ ժողովրդեան կողմանէ այս ներկայացման դէմ բողոք եղաւ առ գերապատիւ առաջնորդական տեղապահն, և քննութիւն բացուելով ստուգուեցաւ որ հեղինակներն ու կատարողներն են նոյն եկեղեցւոյ Տ. Պետրոս անուն քահանայն, թաղականներն ու վարժապետները։ Բայց միւս կողմանէ պատուաւոր ազգայինք խնդրեցին առաջնորդարանէն որ ներուի, և խստութիւն ի գործ դնելով՝ նոր խռովութեան տեղի չը տրուի։

Մեք ալ կառաջարկեմք, որ ներուի՝ իբրև անխոհեմութեան ու չափազանցութեան արդիւնք նկատելով եղելութիւնը. սակայն պատուիրուելով որ զգուշանան ուրիշ անգամ դարձեալ այսպիսի խիստ գայթակղեցուցիչ չափազանցութեան մէջ չդտնուելու համար։ Հեղինակներն ի վերջոյ անշուշտ զղջացած, և ճանչցած ու խոստովանած են իրենց սխալանքն։

—

Կարինէն կգրեն։

«Լրագրոյդ 1138 թիւ թերթին մէջ, ի պատասխանի՝ Բասենոյ վիճակին վրայ մեր հրատարակութեան, կրօնական ժողովոյ դիւանագրիր Ս. Հօր պաշտօնական նամակն հրատարակուած էր։ Ս. Հայրը՝ այնու Բասենոյ վանուց վանահօր տուած հակիրճ բացատրութիւնը կհաղորդէր ձեզ, եզրակացուելով թէ, 1.– յիշեալ երեք քահանայք չեն ուրացող այլ խոստովանող. 2.– Խոսրովանցի քահանային պատկեր վար առնելու յանդգնելն սուտ է եղեր։ 3.– մեր նամակաւ յիշուած երեք գիւղից ժողովուրդք հայ են և որդիք մայրենի եկեղեցւոյ։

«Արդ՝ հարկ կըլլայ հարցուցանել թէ մեր նամակին պարունակութիւնն այդ և այդչա՞փ էր, թէ՝ աւելի. և թէ՝ մնացորդ մասերն ո՛վ զեղչեց նամակին շարքէն։ Տիմոթէոս վարդապետ քանի որ իւր պատասխանագրոյն մէջ մեր նամակին միւս մասանց խօսքը չը՝ներ, կնշանակէ թէ նոցա ճշմարտութիւնն ինքնին խոստովանած կամ ընդունած է լռութեամբ և անուղղակի։ Մեք մեր նամակին մէջ ո՛չ ուրացող քահանայից անուանքը, և ո՛չ անոնց տեղերն յիշած էինք. Գոհ եմք, որ արժ. վանահայրը հաճեր է մեր այդ պակասորդը լեցուցանել, և հաստատել մեր բանից ճշմարտութիւնն, և ա՛յն ալ՝ իւր պաշտօնական գրոյն մէջ։

«Գոմաձորցի Ց. չքահանայն մահմետական չէ, այլ 68 էն ի վեր բացարձակ բողոքական. քաղաքիս մէջ շատերը կը ճանչնան զինքը, և այսպէս կվկայեն նորա համար։ Կըսուի թէ կամովին ետ քաշուած է քահանայական մատակարարութենէ և պաշտօնէ. 3–4 տարի ընդդիմակաւ պահած է իւր նոր համոզումն ու հաւատքը. այնուհետև քողը պատռած և երևան եկած է, լցեալ ամենայն շնորհօք իմաստութեան և փառաւորեալ յամենեցունց։

«Իսկ Խոսրովանցի Ա. չքահանային գալով՝ սա ևս ո՛չ թէ մահմետական, այլ լուտերական եղած է տարի ու կէս ի ծածուկ, և 7 տարի է որ բացարձակ կը ծառայէ բողոքականութեան։ Սորա՝ գաբաւոնացւոց պաշտօնով Կարնոյ մաքսատան ետևի թաղն միսիոնարաց պալատան մէջ ցածօրէն ծառայելն, այսինքն՝ փայտ կոտրել, սափորով ջուր տանել, և այլն, շատերն տեսած ու հայ կրօնի նախատինք լինելն վկայած են։ 67 ին, երբ Տ. Խրիմեան նորընտիր Պատրիարքն Մշոյ վանքէն իւր պաշտօնավայրն կուղևորէր, և երբ Ա. քահանայի ի ծածուկ հաւատափոխութեան խելամուտ եղած էին շատերը, Բասենու մէկ քանի քահանայից խորհրդով և առաջնորդութեամբ կարին եկաւ, և զղջմամբ ներում ստանալով Ս. Հայրիկէն՝ դնաց իւր տեղը։ Բայց 4–5 ամսէ յետոյ դարձեալ սկսաւ իւր համն ու հոտը դուրս տալ, և բողոքականութեան քարոզ ու ջատագով հանդիսանալ։

«Իսկ երրորդ ուրացողն է վերին Բասենոյ քանի մը գիւղօրէից մէջ ժամանակ ժամանակ քահանայութիւն ընող բնութեամբ փոփոխամիտ և թափառական Ս. երէցն։ Կըսուի թէ սա իրմէ (վանահօրէն) քանիցս նախատակոծ լինելուն համար է, որ չհանդուրժելով անասատեր և դացեր բողոքական եղեր է։

«Գալով պատկերաց դէմ եղած նախատանաց՝ ստոյգ է որ այդ գայթակղելի անցքը Խոսրովանայ մէջ տեղի ունեցած չէ, այլ ուրիշ տեղ։ քանզի այն անդամ մեր ստացած նամակին մէջ եկեղեցւոյ մը պատկերներ ըսուած էր, զոր մեք վրիպմամբ եկեղեցւոյն գրած էինք։ Մեր բարեկամն Բասենոյ Գէօփրիւ գիւղը եղած ատեն տեղացի ոմանք իրողութիւնը պատմեր են սա՛պէս. – «Խոսրովանցի բառոդ տէրտէրն անցածներն հոս գալուն՝ իրիկուան ժամերգութեան ժամ գացեր և աւարտմանն ուզեր է ժամին պատկերները վար առնել՝ աւելորդապաշտութիւն համարելով. բայց Ենկոյի Ղաղար և ընկերք հոն դտնուելով՝ ընդդիմացեր և կռփահարելով դուրս վաներ են զայն»։

«Բողոքականութիւնն վարին Բասենոյ Գոմաձոր, Իշխու, Խոսրովան, Թոռոմէրան, Թորթան, Եէնի գիւղ, Իւչվէրան և այլ գիւղօրէից մէջ ճարակած է։ Այս օրերս վարին Բասենէն եկող ճամբորդք ալ մեզ հաստատեցին թէ Խոսրովանու մէջ բողոքականք ցերեկօթիկ վարժարան մը բացած են, ուր կյաճախեն մերձակայ գիւղերէն 60ի չափ հայ աշակերտք։ Նոյն դպրոցին մէջ կիւրակէ օրեր քարոզ կըտրուի ու բարոյախօսութիւն կլինի ի ներկայութեան գունդագունդ ունկնդրաց։

«Խոսրովանցի Ա. չքահանային որդին երկու տարի էր, որ հոս բողոքականաց կեդրոնական վարժարանին մէջ ուսման կծառայեր։ Ասկէց ամիս մը յառաջ շըրջանն աւարտելով՝ վկայականաւ ուրթոշակաւ Բասեան գնաց վարժապետութեան ու քարոզչութեան։

«Վերին Բասենոյ գիւղօրէից մէջ նոր ինկած է բողոքականութեան բոցը։ Տէլիպապա գիւղի մէջ պօլսեցի Սերովբէ անուն վարժապետի մը դասախօսութեամբ երկու տարիէ ի վեր աղգային դպրոց մը բացուած է և օրէ օր յառաջադիմելու վրայ է. դասերն լաւ մեթոտով և կանոնաւոր են. եթէ այսպէս ժամանակ մը յարատևէ՝ մեծ յոյս կայ թէ Բասենոյ ազգային յառաջդիմութեան արշալոյսն այդ գիւղէն պիտի ծագի։

«Բասեան բաւական ընդարձակ և երկրագործութեամբ մշակեալ բերրի ու արգաւանդ երկիր մ'է՝ Կարնոյ, Կարսի, Վաղարշակերտի և Մանազկերտի միջոցն ինկած։ Այս երկրի մէջէն կանցնի հայոց աշխարհի հին Երասխը. բնակչաց բովանդակ թիւն 8 հազարի կհասնի, որոց $^3/_4$ մասը հայ են, որք բնաւորութեամբ պարզամիտ, հանդարտ, աշխատասէր, գործօն և հիւրասէր մարդիկ են. կրթական մասին խիստ ետ մնացած են. 100ին գոնէ երկուքը կարդալ ու գրել չեն գիտեր. իսկ կրօնի վրայ բնաւ հմտութիւն չունին. իրենց արհեստն ու աշխատութիւնը միայն հողագործութիւնն է. բայց Պալ գիւղի, Եէնի գիւղի և Սանամէրի մէջ հայոց իգական սեռն հմուտ են և լաւ գիտեն՝ գորգ ու կապերտ գործել, որ խիստ շահաւէտ է և յարդի գնով կծախուի թէ՝ Կարին և թէ՝ ամենուրեք։

«Բասենոյ վանաց վանահայրը լաւ կընէր եթէ հաճէր՝ իւր խնամոց ենթարկեալ ժողովրդեան վիճակին վրայ մանրամասն տեղեկութիւն տալ երբեմն երբեմն թէ՝ Պատրիարքարանի և թէ՝ ազգային լրագրաց, փոխանակ տկար ու անզօր փաստերով իւր անհոգութեան յանցանքը պարտկել ելնելու. և ասով թէ՝ իւր պարտքը ըստ մասին կատարած, և թէ՝ ազգին ալ ծառայութիւն մը մատուցած կըլլար։ Բայց ատոր ալ զարմանալու չէ. քանզի Նորին արժանապատուութիւնը տարին քանի՝ անդամ և ե՛րբ գիւղերն ելած, ու ժողովրդեան ցաւոց վերահաս եղած կամ դարման տարած է. ես կամաչեմ իւր տեղ, որ այդ բոլոր գովելի ձիրքերէն զուրկ ու թափուր է. այլ իւր հաճոյքը՝ այսինքն կերուխում, անձնասիրութիւն, փառասիրութիւն, և՛ն. իւր սարօք. ահա՛ այս ամեն՝ ժողովրդեան պիտոյից մատակարարութենէն աւելի վերադաս են իւր քով»։

—

. . . Խմբագիր

Անցեալ շաբթու ցաւալի կորուստ մ'ունեցանք կարնեցիքս։ Մեր հայրենակիցներէն Ֆէրէհեան Մինաս էֆէնտի՝ որ մէկ ուկէս տարիէ ի վեր անձնական գործով մը մայրաքաղաքս կգտնուէր, ամիս մը յառաջ հիւանդանալով՝ Ս. Փրկչի հիւանդանոցը տարուեցաւ ի բժշկութիւն. սակայն դժբաղդաբար ամեն ջանք ի դերեւ ելնելով՝ ամսոյս 21ին կնքեց իւր մահկանացու կենաց ընթացքը ի հասակի 55 ամաց։ Հետեւեալ օրը յուղարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ վայելուչքով, ի ներկայութեան արապկիրցի քանի մը վաճառականաց և կարնեցի բազում վաճառականաց, և մարմինը Պալըգլուի ազգային գերեզմանատան մէջ ամփոփուեցաւ։

Հանգուցեալ Մինաս էֆէնտի՝ Կարնոյ երեւելի գերդաստանէ մ'էր, և իւր ազնիւ յատկութեամբքը շատերուն սիրոյ ու համակրանաց արժանի եղած։

Հանգուցելոյն մեծարոյ որդւոցն, ընտանեացն ու համայն պարագայիցն համար յերկնից մխիթարութիւն, և երկար ու երջանիկ օրեր մաղթելով,

Մնամ ևն

23 Փետր. 1877 Պ. Պ. Խաչիկեան

Կ. Պոլիս. Եուսուֆեան խան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Առաջիկայ երեքշաբթի օրը՝ որ է մարտ 1, պիտի բացուի ընդհանուր ժողովը. բայց ոչ թէ յատկացեալ խորհրդարանին մէջ, այլ բոլոր անդամներն կայսերական պալատը պիտի երթան, և անդ ի ներկայութեան օգոստափառ Սուլթանին պիտի կատարուի բացման հանդէսը։ Հետևեալ չորեքշաբթի օրն ալ Նորին վեհափառութիւնը ազգային ժողովոյ խորհրդարանը ներկայ պիտի գըտնուի։ Ունկնդրաց համար յատկապէս տոմսակներ կպատրաստուին։

Ներակուտի և ազգային ժողովոյ խորհրդարանք արդէն պատրաստուած են։ Բոլոր կարասիքն՝ երկրին բնիկ ձեռագործներէն յարդարուած են։

— Անգղիոյ արտաքին գործոց նախարարը դոհունակութեան գիր մ՚ուղղեր է առ իշխանն Գարատաղի, հաշտութեան բանակցութեան մանելուն համար։

— Պասիրեթ կդրէ, թէ Ռուսիոյ կայսրը՝ խաղաղութեան փափաքելով՝ պարսից կառավարութիւնն հրաւիրեր է, որ Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ միջնորդութիւն ընէ։

— Սերվիոյ պաշտօնակալք՝ հինգշաբթի ցէնէր երթալով՝ յունաց Պատրիարքին հետ տեսնուեցան։

— Ռուսիայէն 200 հազար բուպլի ղրկուեր է այս անգամ Գարատաղի իշխանին, կարօտելոց բաշխուելու համար։

— Օգոստ. Սուլթանն երէկ Ցքնտրգլըի մզկթին մէջ աղօթելէն յետոյ, զինուորական գործոց նախարարն հետը ունենալով Այազ-աղայի քէօշկը գնաց։ Սերտարը-Էքրէմն ու Թօփհանէի վերատեսուչ Մահմուտ փաշա ալ գացին։ Նորին վեհափառութիւնն ու փաշաներն հոն ընթրեր են։

— Վագրթ կդրէ։

«Կայսերական սպառինեալ կանոնաւոր զօրաց թիւն՝ 650 հազարի հասաւ. եթէ 200 հազար պահեստի զօրքն ալ աւելցուի՝ 850 հազարի կվերածուի. ասոնց վրայ աւելցունելով՝ մօտերս հրատարակեալ Շէյխ էֆէնտիի հրամանատարութեան ներքև կէսը հետեւակ և կէսը հեծեալ 40 հազար քիւրան, և Անատոլիէն 30 հազար չէրքէս և 70 հազարի չափ ալ կամաւոր զօրքն, 900 այսչափ հազար կըլլայ ամբողջ թիւը։ Այս առայժմ. ի հարկին եթէ պատերազմ ըլլայ, զէնքի դիմող քաջաց թիւը յիշեալ թիւէն կմակաբերուի. և այս զօրութեան կարեւորութեան վրայ՝ լաւ խորհիլ պարտի մեր թշնամին»։

— Կարնոյ կուսակալութեան վիճակէն օսմանեան երեսփոխական ժողովոյ համար երեսփոխան ընտրուեր են՝ Խաբաճեան Դանիէլ և Պալլարեան Մ. Համազասպ էֆէնտիներն, որոց երկուքն ալ տեղւոյն բաղմաժանօթ և բանիբուն ազգայիններէն են, և արդէն ճամբայ ելած ըլլալով՝ կյուսամք թէ քիչ օրէն մայրաքաղաքս կհասնին։

— Դիմացի լրագրաց գրածին նայելով՝ ելեւմտից պաշտօնատունէն հրաման եղեր է, որ հեռագրատան պաշտօնակալաց ամսականներուն ալ այսուհետեւ մէճիտիյէ դրամի տեղ թղթադրամ տրուի։ Կը լսեմք, թէ այս տնօրինութիւնը պաշտօնատարաց մեծ դժգոհութեան պատճառ եղեր է, և շատերը հրաժարելու տրամադիր են։

— Սերվիոյ մէջ Բ. Դրան հետ հաշտութեան պայմաններն ընդունող ազգային ժողովոյ անդամք են, նախորդ նախարարներէն մէկն, 156՝ գիւղացի, 123՝ վաճառական, 51՝ ազգային զօրաց գլխաւորք, 51՝ դիւղապետք, 25՝ եկեղեցական, 7՝ պանդոկապետ, 3՝ գործաւոր, 2՝ ոստիկանութեան քարտուղար, և 1՝ մաքսատան գործակալ։

— Ուշագէն փեսար. 24 թուով դըրուածին նայելով՝ Գարահիսարի ու Ադհիսարի մէջ շատ ձիւն եկեր, և Բէօթահիոյ ճամբուն վրայ 17 հոգի սառեր մեռեր են։

— Սէլանիկէն հանրագիր մը մատուցուեր է այս օրերս կայսերական կառավարութեան, և մէկ օրինակն ալ Վագրթ լրագրին ղրկուեր է, ուսկից կիմացուի, թէ Սէլանիկի մէջ կատարուած ընտրութեան գործողութիւնը ապօրինի է։ Ասկէց զատ հանրագիրը կգանգատի Սէլանիկցի Իպրահիմ պէյի ընթացից դէմ։ Սա՝ Միւֆթիութեան պաշտօնէ հանուելէն յետոյ, կըսեն, յաջողեցաւ Իտարէի ժողովոյն մէջ սողոսկիլ, ամեն ուզածն ընել, դաղտնի Իլթիզամի գործոց մէջ մտնել, և հողային անարժէք մէկ սեպհականութեամբը կառավարութեան վառօդարանի ջաղացքը իւրացունել։ Կյաւելուն թէ այս անձին գործակից ու ընթացակից են՝ Զէման լրագրոյն արտօնատէրն, Իտարէի ժողովոյ գլխաւոր քարտուղարն, Էվրադ-միւտիրին, Միւմէյիզն և այլ անձինք, և թէ՝ ցարդ սոցա ձեռքն է տեղական կառավարութիւնը։ Սոքա ամեն ուզածնին անարդել յառաջ կտանին, մեծ հարստութիւններ դիզած են, և մէջերնուն մէկն (միւմէյիզն) այս օրերս Պօլսէն 120 լիրայի երկու ձիեր առեր ու երկէի կառքով կպտրտի, և Մալիյէ-նազրը տիտղոսը կուտան եղեր իրեն։ Զէմանի արտօնատերը՝ Շ.քոտրայի Բուսումաթի տեսչութենէ, Սէլանիկի և Իսքիւպի գլխաւոր քարտուղարութենէ հանուած է, և թէ ինքն ու Իպրահիմ պէյ երեսփոխան ընտրուած են՝ մէկզմէկ յառաջ քշելով։

Տարակոյս չկայ, թէ կայսերական կառավարութիւնն ամենայն խնամով ուշադրութեան պիտի առնու հանրագիրը, որ այսպիսի ծանր ամբաստանութիւններ կպարունակէ, և որոց մէկն իսկ՝ եթէ ստոյգ ելնէ, չէ թէ երեսփոխան ըլլալու իրաւունքէ զրկուելու, այլ մինչև իսկ ծանր պատժոց ենթարկուելու են։ Իսկ եթէ չստուգուին՝ բնականաբար իրրև զրպարտիչ կպատժուին ստորագրողք կամ նոցա առաջնորդները։

Վէզիրութեան աստիճան տրուեցաւ՝ կայսերական պալատան գլխաւոր քարտուղար Սայիտ պէյի։

— Առաջին աստիճանի Միւթէմայիզ պաշտօնատար անուանեցաւ՝ լրագրական նախկին վերատեսուչ սօֆիացի Փէրլիթէվ էֆէնտի։

— Իտիրնէի պուլղար պապական արքեպիսկոպոսին՝ երկրորդ աստիճանի մէճիտիյէ պատուանշան տրուեր է, արդէն ունեցածը՝ որ ստորին աստիճանի էր՝ փոխուելով։

Գաղղիոյ մէջ ոսկի դրամն այնչափ առատ է վերջին ժամանակներս, որ Փարիզի դրամատանց ամբարներն լցուած ըլլալով՝ սանդուխներուն ներքեւներն ու ուրիշ այսպիսի տեղեր պարկերով ոսկի կդնեն եղեր։ Ժողովուրդն ամեն օր ոսկի կտանի և թուղթ (պանդնօթ) կառնու. և այս փոխանակութիւնը մինչև այն աստիճան առաջ գացեր է, որ դրամատունք առաջքն առնելու համար սկսեր են թուղթ գլուխ 1½ ֆրանգ տարբերութիւն պահանջել. սակայն ժողովուրդը դարձեալ ոսկի տանիլ ու թուղթ ուղելէ չէ դադարեր, և դրամատունք սկսեր են խորհիլ որ տարբերութիւնը աւելցունեն։ Ահա ներկայ ժամանակիս մէջ՝ յորում դրեթէ ամեն տեղ ոսկիի նուազութեան ու թղթադրամի առատութեան պատճառաւ մեծ նեղութիւն կտեսնուի, Գաղղիա ընդհակառակն ճոխ ու փարթամ վիճակի մէջ կգտնուի, և Գաղղիոյ մէջ թուղթն առաւել յարգի է քան թէ ոսկին. Գաղղիոյ մէջ որ միլիարներով ֆրանգներ տուժեց, թող ուրիշ մեծամեծ ցնաներն, որոց ենթարկեցաւ վերջին ահագին պատերազմին պատճառաւ. բայց քիչ ժամանակի մէջ այս ցնաներուն տեղը լեցուց, և ահաւասիկ դարձեալ ճոխացաւ, դարձեալ զօրացաւ, որովհետեւ դիտութիւն՝ արհեստ ու վաճառականութիւն յանչափս յառաջ դացած են այս երկրին մէջ, և ժողովրդեան համար ամեն դիւրութիւն ու քաջալերութիւն կայ։

— Ցունաստանի նախարարք հարկադրեր են հրաժարիլ, ազգային ժողովոյ մէջ իրենց համար ընդդէմ 65ի 70 անվստահութեան քուէ տրուելուն պատճառաւ։ Այս քուէարկութեան տեղի տրուեր է՝ Ֆասթէլիոյի տիկնոջ թոշակ կապուիլը կառավարութեան կողմանէ, որոյ համար հարցում եղեր և աւելորդ ըլլալն հաստատուեր է։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Փետրվար 25

Քօնսօլիտէ			13– 5
Սօսիէթէ ժէնէրալի բաժինք	Անգ.	լիր.	5– 5
Քրէտի »	»	Օսմ. »	3–
Երկաթուղեաց՝	»	ֆր.	55,50
Թրամուէյ		Օսմ. լիր.	1–55
1865ի փոխառութիւն		ֆր.	74–
1865ի »		»	75
1869ի »		»	70–
1872ի »			22–50

ԴՐԱՄՔ, Օսմ. լիրան 100 էն

Մէճիտիյէ	104–10	Ռուսիոյ բօլ	90–10
Մէթալիք	115–	Գաղղ. լիրա	88–18
Պղինձ	157–	Անգղ. »	110–50
Թղթադրամ	162–10	Գրիմից	51–20

ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ
ՊԵՏՐՈՍ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ
Ռնդ-ֆաշ խան Ընբ. 1

Սոյն վիմագրատան մէջ կը պատրաստուին նուրբ և ընտիր ձեւով և արժան գնով ամէն տեսակ այցելատոմս, հասցէ և անուանց սկզբնատառեր։

Ցաճախորդք ըստ ամենայնի գոհ կըրնան լինել։

Արարատեան ընկերութիւնն իւր 10րդ նիստ պիտի կատարէ առաջիկայ կիրակէ փետրվարի 27 ժամ 6 1/2 ին, սովորական ժողովարանի մէջ ընկերներն կը հրաւիրուին կատարել իւրեանց պարտ։

Ընդ. հանուր ժողովի

Ատենապետ Ատենադպիր

Մ. Զէրոյ Կ. Վոսկեան

Ի ԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Պէյքօղ տէպաղխանէսի իչին պիր պուչուք մահ զարֆընտա Իզմիրտէ պուլունան մէմուրընա Թէսլիմ քըլընմսք վէ Իզմիրտէն տէպաղխանէի մէզբիւրէ քատար վուգու պուլանադ մասարիֆի նաքլիյէսիլէ բէսմ կէօմրիւկիւ նիզամիյէ խաղինէսինէ այիտ պուլունմադ վէ էսմանը տէպաղհանէի մէզբիւր իչին Այտըն վիլայէթի էմլակինէ վերիլմիշ օլան կէօն հավալէսինտէն օլարադ հինի Թէսլիմինտէ պէրվէճհի փէշին սիմ մէճիտիյէ իկիրմի ղրուշա վէ սիմ մէճիտիյէ վերիլմէտիյի հալտէ փիռացա ֆիէաթը յըլա պիրհիսապ ֆարքը յըլա պէրապէր քափմէ օլարադ մէմուրը մումափլէյհ Թարաֆընտան իթա քըլընմադ շարթլարը յըլա վէ մահֆուզ պուլունան նումունէսի վէճհիլէ մուպայեա օլունաճաք 2500 ատէտ թուղլու քուրու Իզմիր կէօնիւնին ալէհեր քըյէսի օն ղրուշ օն պէշ փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ շուպաթը ռումինին եիրմի սէքիզինճի փաղար երթէսի կիւնի քարարը քաթիսի վերիլէճէյինտէն իթա իթմէյէ թալիպ օլանլարը նէվմի մէզբիւրտէ Տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլերի։

Զէ շուպաթ 1877

Պապը Սէրասքէրի

—

Տէրը Սաատէթ ըէժի իտարէսինին պիտայէթը թէէսիսինտէն պէրու, ասքիրի շահանէ իչուն մուգթադի տիւխան ֆիի մալիւմ իլէ թախսիս օլունան մէվդիլերտէ վէ սուրէթը մաղպուլաթատէ ֆիրուխթ իթիտրիմէքտէ օլարդը հալտէ, իտարէի մէզբիւրէ պա իրատէի սէնիյէ սալը հալ շէհրը շուպաթը իպթիտասընտան իթիպարէն լաղվ իլէ, թաշրալէրտէ օլարդը կիպի ֆապրիգալէր քիւշատ օլընմըշ, վէ շիմտի ասքիրի շահանէ իչիւն շէհրի եէտի պին գըյէտէն օն, օն պէշ պին գըյէյէ գատար իճապ իտէն թիւթիւնին թագտիր վէ թային օլունաճագ ֆիյաթի իլէ ֆապրիգաճիլէրտէն թալիպ օլանլեր մարիֆէթի իլէ սաթըբըմասը լազըմ կէլմիշ օլմաղլէ, մաթլուպէ միւվաֆըգ սուրէթտէ վէ ֆիյաթտէ ասքիրի շահանէ իչուն տիւխան վիրիլմէք, վէ իանէթէն պաղը մահալ համիյէթմէնտանը թարաֆլէրինտէն իթա օրընմըշ օլան եափրագ տիւխանը իւճրէթլէ գըյտըրմադ իւզրէ, թալիպ օլանլերլէ ագտը մուգավէլէ օլունաճաղընտան՝ խաթէք իտէն ֆապրիգա սահիպլէրինին միւղաքերէտէ պուլունմադ, վէ գարարը դաթիսի շուպաթը ռումինին եէկիրմի եէտինճի կիւնիւ իթա օլունմադ իւզրէ իշ պու շուպաթըն օն եէտինճի փէնչշէնպիհ կիւնիւնտէն իթիպարէն Տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլերի, վէ եավսօտ գանղը նէվ թիւթիւնի գա՛չ ղուրուշ ֆիյաթլէ վիրէպիլէճէքլերինի պա վարագա պէյան իլէ, նումունէլերինի իրսալ իյլէմէլերի։

Պապը Սէրասքէրի

13 Շուպաթ 1877

Ս. ՂԵՈՆԴԵԱՆՑ

ԳԻՇԵՐՕԹԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՐՄԱՇ

Անցեալ օգոստ. ամսոյ 18րդ օրն վարժարանիս արձակուրդի օրերն աւարտեալ ըլլալով՝ աշակերտներն դարձած են և արդէն դասուց աւանդումն իսկ սկսուած է։

Այն ծնողաց կամ որբերու խնամակալ մարդասէր բարերարաց որ իրենց զաւակները կամ որբը վարժարանիս խնամոց յանձնել կուզեն կը յայտարարեմք թէ՝

Ս. Ղեւոնդեանց գիշերօթեայ վարժարանս յառաջադէմ վարժարաններու մեթոտով կանոնաւորեալ խիստ բարեկարգ վարժարան մ'է։

Կ. Պոլսէն և այլ քաղաքներէ փոքր ինչ հեռաւորութիւնը թէև ոմանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիքէ ծնողաց աչքէն և զբօսալից վայրերէ հեռի անփոփ և անզբաղ մտօք միայն ուսման պարապելու կողմանէ։

Ուսմանց տեսակներուն ամենը, նկարչութեան ամեն ճիւղերը և լեզուներէն երեք միայն, հայերէն, գաղղիերէն և տաճկերէն կաւանդուին, բայց ոչ բնաւ վեր ի վերոյ կամ թերի։

Ամեն ուսանելի առարկայից համար, ընտիր և յաջողակ դասատուներ կան։

Աշակերտաց կեանքն և առողջութիւնը խնամով պահպանելու համար վարժարանս իւր մէջ յատկապէս մշտնջենաւոր բժիշկ կպահէ վկայեալ և յաջողակ, և բաւականաչափ դեղարան։

Աշակերտին տարեկան թոշակն է 52 լիրա օսմանեան որոյ մէջ են, երթևեկութեանց թղթատարութեանց և սովորական ագանելեաց ծախքէն զատ, ուրիշ բոլոր ծախքերը։

Արձակուրդի կամ պարապոյ օրերը բոլոր տարին միայն մէկ ամիս է և ո՛չ բնաւ աւելի։

Միշտ բաց է և բաց պիտի մնայ վարժարանս։ որ ատեն որ ուզեն՝ ազատ են ծնողք կամ բարերարք իրենց զաւակները կամ սաները տալու։

Որոնք որ աշակերտ պիտի ղրկեն մեզ՝ պէտք է կամ Պոլիս Փունջ լրագրոյ արտօնատէր մեծ. Համբարձում էֆ. Ալաճաճեանի հետ տեսնուին (Ալաճա–համամ խանը խալիլ թիւ 19) և կամ հոս մեզի հետ թղթակցին։

1876 սեպտ. 1 Խորէն Եպիսկ.

Ի Վանս Զ. Ս. Աստուածածնի Վ. Արմաղան

ՅԱրմաշ

Պոլիս, կամրջին գլուխը, Վալիտէ-Սուլթանի նորաշէն խանութներէն թիւ 4, Մատթէոսեանց խանութը, տաճկերէն, հայերէն և գաղղիերէն ամեն տեսակ հին և նոր հրատարակեալ գրքեր, դպրոցական և այլն, կգտնուին գոհացուցիչ գնով։

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

Գ. Վ. Ծաղկի տուն, Գալատիոյ Գրիգորեան ազգ. բեռնատարաց դիմաց։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԴԵՂԱՊԱՐԱՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԴՐՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ

Վ. ԾԱՆՆԻ

Բերա Մեծ փողոց Աղտամի թիւ 77

եւ

Կ. Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Միակ մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմագէտին շինած ֆն. լաֆինէն, որոքվրիկ ալիզ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև.

Քոնֆիս (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սէլֆոն գը Քինին, զուտ և մաքուր, Բէլթիէ, Տիւպօսք, Ժօպսթ և Էվանս Լէդէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Ձկան էօղ, զուտ, Քրիսթիանայի Բէթէր Մէյլերի գործարանէն ելած։

Եղեղեղ (հինտիպա) խահուէ, Լուտվիկսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող՝, որ հասարակ խահուէի հետ խառնելով զինը մեծապէս կինչեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Արոմատիկան սառոյց ամեն ժամու մէջ։

Տէ-ժենի ջուր, մազերու անվրիպելի ներկ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը արտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու։

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբսլիի, հաղի, սրտի բարտիման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սրրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահէ–գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքսֆորտ փողոց թիւ 533։

ՊԱՏՄԱՆԵՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ՁՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՝ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն–Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Ալաճա–Համամ խալիլ խան միջին յարկ թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Բիզա փաշա խան թիւ 3